

ԿԱՐՃ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՆ

ՑԱՍՈՐԻՍ

(Հարուսակութիւն, առև. թիւ 8.)

Հալէպ կամ Հալէպ ելշահով, այն է Տերիա, ըստ հնոց Ոքալիսպն կամ Քաղեւազն, մոյսաբազմաք Մորոց, երեւելի է ի սկզբանէ անափ եւ այսր ծաղկեալ վաճառականութեամբը Բաւզաքին բնական դիրքը հովտի մէջ փաքը բլասիներու ստորոտը կառուցած է, շըջապատեալ միգաբեր ծառատունի ներով և պողաւեւո պարտէներով, թէ պէտք բունքու գործութիւն շըջապատը պարտպապատէ, ինչպէս ցարդ կը տեսնուի, այլ գրեթէ քաղաքին մէկ մասը գուրս ելած է, ինչպէս որ բնակիչք տեղւայ ներսի և գուրսի քաղաք կ'անուանէն և Քաղաքը բնականապէս եօթը գուրսն ունի, որոց այլ և այլ անուններ կ'ուտան տեղւոյն ժողովուրդը։ Յնետին ժամանակը քանի մի գուներ եւս բացուեր է, պարտպին անկիւնները կանգնած աշխարհակները քաղաքին շքեղութիւն մի կուտան, բայց այժմ շատ տեղերը շինութեան և նորոգութեան կարօտութիւն ունի։ թէ պարտպին և թէ գուներուն վրայ արարոցի արձանագրութիւններ եւ ուրիշ քանդակուած զարդեր կը տեսնուին։ Այժմ պարիսապը աւելի արժեք մի չունենալուն համար գրեթէ քաղաքին մէջ ընկեղումած է, տուներուն յաճախութենէ, ասոր նման է Գահիրէ քաղաքը։ Քաղաքին դռները օրինաց համեմատ գիշերները կը փակուին, այլ պահապանք կը հակեն միշտ, զուրսի քաղաքը կոչուած տեղը գարձեալ կից է նյոն քաղաքին ու մեծ մասամբ բնակարան քրիստոնէից և տեղի եկեղեցեաց և առաջնորդարանաց, ասոր մօս է քրիստոնէից գերեա զմանասունը։ Տնդհանրապէս Տերիա մեծամեծ

եւ երեւելի շնուրածներ ունի թէ նոր և թէ հին՝ առհասարակ քարու կիր, կարի մեծ և ընդարձակ է շուշաները և վաճառաւուղիքը հոյակապ քարուկիր շնուրածներով, կարաւանատունք և իջևանատեղիք բազմաթիւ են, ուր կը նոսաին երեւելի վաճառականներ։ Արաջին կարգի է ջուխաձիներուն շուշան տուգ էլ ճեղիք անուանեալ։ Հասարակաց դիւրութեան համար իւրաքանչիւր վաճառքներուն յասկացեալ վաճառատեղիք որոշուած է, փողոցները յարդարուն և առայատակ, միշտ մաքուր, քաղաքը թաղերու բաժնը շաղուած, իւրաքանչիւրը գուռ և գիշերապահ ունի, Գահիրէի թաղերը ասոր յար և նման է, բայց այս սովորութիւնիսանուած է այժմ, Ծինուածոց մէջ երեւելի է բերդը իւր հնութեամբ քաղաքին յարեւելիքան կողմը, բարձրաւանդակ քարաբլիք մի վերայ, կրոկ նապարապով ամրացեալ, և շըջապատ յատակը խոր և լայն խրամներ (խանգիւն) փորուած է, միան գուռ մի ունի որուն վերայ հին Արաբացի արձանագրութիւններ կը տեսնուի, բերդին բոլորակիքը վերի ծայրէն մինչեւ խրամները զարդարակիք ուղղուած, և միան գամայն սալայատակօք յարդարուած ըլլարավ անհնար է մէկու մը ելլալ կամ իջնալ բայց այժմ մեծ մասը քակուած խանգարուած է։

Ունի ստորերկիւեայ տեղի իբր գտրան, (ինչպէս Տերիայ բոլոր սուներուն մէջ կը տեսնուի)։ բայց վար իջնալը կարի երկիւ զալի է, ներքին օդը ապահանուած ըլլարուն։ Այս բերդին մէջ է հնութեանց թանգարանը։ աւր կը պահուին հին և նոր զէնքեր, որ գտերէ ի վեր անկորուաս մնացեր են, զոր օրինակ վահան, նետ և աղեղն + նիզակ և տէգ պէսպէս + սաղաւարու,

զրահ, ուուր զանազան տեսակ, լմիսո, բարձրանի գործիք, և այլ պատերազմի և զինուարութեան վերաբերեալ զինքեր, արքունի կանոնաւոր զօրք նրա ամիս անդ : Ենոր դիմաց քաղաքին հիւսիսային կողմն է արքունի զօրանոցը (Գլուխ) կառաւցեալ, լոպահիմ փաշացէն և գիւղոսի, ունի փոքր գետակ մի որ Անթէպի կողմերէն կ'ուգայ, իրենք Հայկ արք կ'անուանեն : Քաղաքէն ժամ մի հեռի բարեհամ ալղիւր մի կոյ, ուստի կը տանեն երեւելի մարդիկ ջրու խմելու համար, և ներկա բարձրը իրենց ներկանքները աստ մի այն կը լուսանան : Ունի մեծ ջրանցք ուստի կը բամենուի շուկաները և թաղերը ջուրը, Մանուցմէ զատ իւրաքանչիւր տան մէջ կը գտնուի բարեհամ ջնառներ, գովելի մաքրութիւն եւ փափկասիրութիւն բնակչաց քաղաքին հոգակուած է յամենայն տեղին, մանուանդ քրիստոնէից, բաց յերեւելի շինուածոց, կան նաև հցակապ մզկիթներ, որոց շատերը ականաւոր մարդիկ կուռացած են տարեկան բաւական յատկացեալ եկամուաներով, որոց բոլորն աղ քննել և զնիել անհարելի եւ զատ մեզ, մանաւանդ քրիստոնէից մեծ արդելք է : Թիսյն գիտցածներս հոս կը գրեմ, ուղարք զոր այլազդիք ճամփել շնաբից մեղիր կոչեն, երեւելի յոյժ թէ ի հցակապ շինուածու միւսինն նկարիւք, թէ ի հնութիւն և թէ ի պատիւա որքան զամենայն մզկիթու աւելի կը յարգեն եւ կը մեծարեն, և մայր եկեղեցի քրիստոնէից զօր ի դարսաց անսոի ի մզկիթ փոխած են, ոմիւնքն ցարդ քրիստոնէից նշանները կ'երեւին քարերուն վիսոյ, խաչ և գիր քանդակուած, որուն մինարեն քառանկիւնի ձեւովին և բարձրութեամ, բք միւսներէն կը ատրեգիք ի դարգերի : Իբր թէ զանցակառուն եղած ըլլայ յառաջ.

բայց հաւանական չվժու իր, քրիստունէ ից խստիւ արգելուած է այս տեղ մոնալ : (Օման փայլ ճամփոփ, նոյն իսկ անուանի և մեծադորդ (Օման փայլյէ շինուած, ինչպէս որ գործը գործողին մեծանձնութիւնը կը յայտնէ : Առվ փայլ ճամփոփ պայտայ թաղը : Ճամփ եւ լուսակիթ, և այլն : Անկանիւն, տեղի յոյժ ընդարձակ, բնակութիւն և ներկի մուլտի տեղիներուն որոց գլխաւորը յակոնիայ (Անեա) կը նստի, ունի տարեկան մուտք թէ հերիսայէն և թէ շրջականերէն երեք հարիւր հազար գահեկան : Քրիստոնէից մեծ մասը կարի եւ ապէլոյ խաչի թաղ կոչուած տեղը կը բնակին, և ոմանց ներսի բաղաքը որոնք առհասարակ ասոնք են, հայք, պատրիսկան հայք, յոյնք, պապական յոյնք, պապական լորորիք և Վարոնիորք, որոնց ամեն մէկուն առանձին եկեղեցի, գլուրոց, առաջնորդարանն և եպիսկոպոս առաջնորդի կայ, իսկ Արքանշխիկան կրօնաւորք, բարուչին և լազարեան քորք վայինի կոչուած խանը կը նստին, իրենց ձեռքը արդի ունեցած եկեղեցիներուն զատ յիշեալ տեղւոյն մօս կը կուռւցանեն եկեղեցի մի հցակապ շափաղանց բարձր գոթացի ճարտարութեամբ, բայց տակաւին կայ միայնկատոր : Վաճառականութիւնը ծաղկած ըլլապալ կան նաեւ երեւելի Հայ վաճառականներ, որոց Ճիւղը կը տարածէ յարեւելլ Միսիայի բոլոր կոչմերը ի Պատաստ, Պարսայ և ի Պարսկաստան, թէպէտ Ծուղայու և Հընդկաստանի Հայ վաճառականները մեծ յարսթերութիւններին քաղաքին հետ, բայց հիմայ խափանուած է :

Երկրագործութիւն հին սովորութեան համեմատ է, և կարի ընդարձակ գաշտեր ունի իւր բողը ատրեգը երկրին առատ է, բերէ ցորեան, հնդեղէն պէսպէս շուշմա,

բարիմակ և մետաքս, խողով բ բռորդ  
տարին 200 կենցենար դամբառ։ Անդը,  
օճառ, ապղուն ունի քառան գործարան  
մատունի, անուանի է փիստակն ֆրանչ  
դըլիստոր, սէկ ընտարի, կերպաս ։ որոց  
գործարանները բազմաթիւ են, Դա  
մանկուէն երգորդ հաշուելով, կան  
նաեւ այլ և այլ արհեստաւորք ներկա  
րարք ։ որոց ներկն համբաւաւոր է,  
խաղաքարդք, քաղաքափ, Դուրսէն եկած  
վաճառքն են, գոհարեղէն, մարդիքա,  
գորդ, խալչաց, կարպետ և ծխախոտ,  
Խենչիդ Պարսկուստանի, լեզակ չվշտ,  
և Եւրոպայի ամեն աեսակ ապրանք  
ներէն։ Ուստի կարաւանք միշտ ան  
ոդակաս մեսաքսայարդարները կու  
րի յաջողակ են, բնակիչք բազմաթիւ  
40.000 տուն միայն մահմետական  
ները, և 300 տուն հայոց ազգէն։  
Հոսնցմէ զատ կան նաեւ գաղթական  
հայեր, Հայաստանի զանազան գա  
ւառներէն, որոց երեւելիները վաճա  
ռականութեամբ կը պարապէն, իոկ մը  
նոցեալները տուրքատի և ծառայու  
թեան։ Սասունցի հայերը բոլորն ալ  
հայագործ և հացալանառ են, Հա  
օպակաց յի զուն արապերէն է, բայց  
հայք գիտեն հայերէն խօսիլ, Տերիա  
ցիք մարմաքելով կը լիշեն 1849 թուոյն  
պատահած աղէտալի դէպրը։ Հայք  
մէկ գաւթի մէջ երկու եկեղեցի ու  
նին սուրբ Սասունածածին և Քառա  
սուն մանուկ անուամբ, երկու երկա  
թագամա արտապին գուներով, եկե  
ղեցւց գաւթիթը եկեղեցականաց դամ  
բարաններ կը ամեսուին։ Յունաց եւ  
Վարոնաց եկեղեցւց գուները այս  
գաւթին մէջ ըլլալով, վերջիշեալ հա  
յոց գուներէն երթեւեկեն,  
Ուստի հայոց սեփհական իրաւունքը  
կրտաւած կ'երեւի, ինչպէս որ մարո  
նիոք հակառակելով նոյն գուներուն  
մէկուն տիրելուքը են, բայց տեղ

և այն ազգայնոց աշխատութեամբ գաւ  
թը վաստրկէր և գուռը վերատին հայոց  
սեփհականով երկու գրան մէջ տեղը  
հայերէն արձանադրութիւն գրուած  
են, ասու է առաջնորդարանը և թաւ  
զականաց ժողովատեղին, դպրոցը ուր  
գասառութիւն մինչ ի քերականութիւն  
լինի. կայ արագերէն և տաճկերէն, ուշ  
նին ծաղկոց անուամբ դպրոց մի եւլու  
Նախայիշտակելալ Սուրբ Ծոյտուա  
ծածնի եկեղեցին չորս միաձոյլ սիւնեւ  
րու վրայ կառուցուած է երեք խորա  
նով առանց խաչկալի, դրան վրայ եւ  
զած արձանագրութիւնը, «Ես եմ  
դուռն, ընդիս եթէ ոք մոցէ» և կեց  
ցէ. մոցէ ելցէ և ձարակ գացէ ո, այս  
արագերէն ալ կրինուած է։ «Նորոգե  
ցաւ Սուրբ Ծոյտուածածնի եկեղեց  
ցին թուին Հայոց 984 ի թագաւոր  
րութեան Սուլթան միէմանին (թեր  
եւս Սուլէմանին), և ի հայրապետու  
թեան Տ. Յովհաննէս կաթողիկոսին և  
կրիին նորոգեցաւ թուին 1849 և ի  
թագաւորութեն ինամածու Սուլթան  
Մասիւլ մէծիտին և ի հայրապետու  
թեան Տ. Ոկբայէլի կաթողիկոսին ու  
Քառասուն մանուկ եկեղեցին բաւա  
կան ընդարձակ քարուկիր չէնքով սիւն  
ներու վրայ կառուցուած է, ձեռաւ  
գիր մատեանները աչքէ անցնելու  
համար մատենադարմ մօնալու բայց  
դը ունեցանք։ Ուր 100 հատորի շափ  
գրեանք փոշիներու տակ ծածկուած  
էին, բաւական աշխատելէն վերջը գու  
տակար բան մի չ'կրցանք գտննալ, որով  
հետեւ մեզմէ յառաջ շատ ձեռքեր  
շշափիր են։ Կառանք միայն գիրք մի,  
որուն յիշտակարան է, գրեալ ի վանա  
Արքյն Յակոբայ որ Արքաւազէմ, ի  
թուին հայոց ԶՆ. 906. Ուր աշխա  
տութիւնը պարապ չ'ըլլալու համար  
չորս հատոր գիրք պոչեցինք որ տեղը  
և այն ազգայինք յօժարութեամբ նորին

լեցին Արք Աթոռոյս թանգարակնին .  
Ըստրհակալեաց արժանին նաև Քիւըք-  
ձանօթ Յավհաննէս ադային նուերը,  
որոնք են 40 հաստի չափ Նեթմը և  
Եւնի Խիլիկիոյ մեր թագաւորաց  
փոքր և մեծ արծամթ դրամները , և  
քանի մի հին ստահներ . Այս եկե-  
զեցւոյ մէջ աստուան նառակ սեղանին  
առջեւ եղած արձանագրութեանց և  
տապանագրաց օրինակը հոս կը զնենք  
ի տեղեկութիւն հետարբեկի անձանց :

Խաչ արձանին մի վրայ Աթոռի խա-  
չը բարեխօս առ Քրիստոս, խօջայ  
Ապութէի հոգււոյն և ծնողացն Աիր-  
դենին, տէր աթանասին թուին, Ա-ի Բ.  
1028ո: Աեղանին աստիճաններուն վրայ:  
“ Սոր վասն անշափ սիրոյ քային , բա-  
նդոք ի կոււեն աւեր մարմին . ազա-  
շանօք աստուածածնին , թող զյանցա-  
նըս տէր Օսքարիայ կամուզզիկոսին ,  
որ և հանգեաւ . ի մեծ թուին Ած  
1050 աւելըրդին , յորժամ գայցես յաշ-  
խարհ Կրկին , յարմ զաս փառօք քային ,  
զիս զմեզք որդի սորին որ և պահես  
շնորհեւ քային , ամէն : ”

Պատին մէջ դրուած քարի մը վրայ :  
“ Յիսուս Քրիստոս տէրդ երկնային  
երկրպագեալ անուան քային , որ կա-  
մաւ հօրդ համեալ հօտին ինըր յեր-  
կնից յաշնարհ ստորին , վասն ազեւից  
+ + + մեծի այգին զի էր կորեալ քոյ  
սիրելին , նուաստացար յարգանդ կու-  
սին և մարդ եղեր բոլորալին , չարչա-  
րանօք անհնարին , զմահ յանձն ա-  
ռեր ի վերայ իսաշնին , եգար ի ներքոյ  
կոբեալ վիմին և կոփածոյ գերեկ զմա-  
նին , յարեար փառօք աստուածային  
և համբարձար առ հայր յերկինս , և  
յորժամ գաս գարձեալ կրկին , կատա-

զնովի սորին ընդ լուսերամ Արքոց քո-  
յին , դասաւորեալ ընդ անուանակցին  
Ասւըք Վետրոսի մեծի վիմին , և զգա-  
տուական ոսկերք սորին զոր մեծա-  
րեալ ի մէնջ պատուեին , ի բժշկու-  
թիւն ցաւոց , լիցին որբ հաւատով ե-  
կեալ մերձին , նա ի հօրէ ծնեալ լինի  
Լորիկառ անուն փոքր քաղաքին , և  
սրբութեամբ ինքն սնանի , որպէս  
տատրակ յանապատի , ի յափն մեծ Լի-  
րաս գեանի ի վանքն սուըք Տիմոթէ-  
սոփ , զամ քառասուն և այլ աւելի , վա-  
րս ու զգէր ազգի ազգի , այլ և ունէր  
շնորհաց հոգի , և հուշակեալ իմոստ  
սորին , մեծ վորդապետ բայցայսող  
գրոց բանին , բազում օրդիս ի փառս  
ածեալ , հանեալ բարձրաստուիծանս ի-  
մաստից , տուեալ է գաւազան , որոց աւ-  
նարդն թուամաս յետին , զոր եւ յետոյ  
ի Ասւըք հոգււոյն ընտրեալ լինի կա-  
թուզիկոս . վերակարդի զամն եօթն  
ոչ աւելի , բազում ձգանց սա հանգի-  
պի որ և հանգեաւ . ի մեծ թուին  
1057 Ածենին , յաւագ պահոց երեք  
շաբթի ի յերկրորդումն շաբթաթին , ով  
Ասւըք մանկունք նոր Աիօնի որբ և յե-  
տոյ գայք զինի , երես կոման ձերում  
ոտի , միայն խնդիրս ձէնջ կատարի ըդ-  
ակաւ բանս յորժամ կարդայք , որ կայ  
գրեալ յայսմ արձանի , սուըք ազօմիւք  
ձեր հացցեցէք , աստմիք աստուած ո-  
զորմի : ”

Հ ա յ ո ւ ն ա յ ի Ե լ :

### Ճ Ա Մ Մ Ե Ն Ա Մ Ե Ր Ա Կ Ե Ր

— Ա յ ր ա խ ու թ ե ա մ բ ս ո տ ի կ ը ծ ա ն ու-  
ց ա ն ե մ բ հ ա ր ց ա ս է ր հ ա ս ա ր ա կ ու թ ե օ ր  
Ա ս ւ ը ք Յ ա ր ու թ ե ա ն Ֆ ա ն ա ր ի գ մ բ է թ ի  
շ ի ն ու թ ի լ և ն ե ր բ ի ն ն կ ա ր ա կ ե ր տ ու թ ի ն  
ն ե ր ը բ ո լ ո ր ո վ ի ն լ ա ց ա ծ ե ն կ և ա յ ժ մ